№ 9 Յունվարի 26 (Փետրվարի 7) 1879 Յունվարի 26 (Փետրվարի 7) № 9

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մինչև այժմ ընտրված չէ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Բաղուից։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Մօսկվայից։ Նամակ Դերբենդից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։

ՄԻՆՉԵՒ ԱՅԺՄ ԸՏՐՎԱԾ ՉԷ

Ընթերցողը հասկանում է ում վրա ենք խօսում։ Այո՛, մինչև այժմ ամբողջ Թիֆլիսում մի մարդ չէ գտնվում, որ արժանի լինէր Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնը վարելու....

Մենք վաղուց ասացինք որ այն ձևով ընտրութիւնները, ինչ ձևով մեր նոր ձայնաւորներն են անում, երբէք մի հաստատ հետևանքի չեն հասցնի։

Բոլոր ձայնաւորները անթիւ խումբերի վրա են բաժանվել և այդ խմբերից ոչ մինը հնարՀ չունի իր կանդիդատի համար 21 ձայնից աւելի հաւաքել, ուրեմն կանդիդատներից ոչ մինը ձայնաւորների ամբողջ թիւ երրորդական էլ չէ միացնում....

Այսպէս ընտրել քաղաքագլուխ չէ կարելի։

Մինթէ մեր նոր Դումայի մէջ մի 30, 35 մարդ չը կայ, որոնք փոքր ի շատէ համերաշխութիւն ունենային իրանց մէջ և միասին հաւաքվելով մի մանաւոր ժողով կազմէին և վերջապէս որոշէին Դումայի մեծամասնութեան կանդիդատին։

Բացի սրանից մենք այն կարծիքի ենք, որ Դումայի վերջին նիստի ժամանակ գործ դրած քուէարկութեան ձևը անյարմար էր։ Մինգ կանդիդատներին միաժամանակ քուէարկել յարմար չէ այն պատճառով, որ բոլորն էլ կարող են սևանալ և ոչ ոք մեծամասնութիւն չը ստանալ, այն ինչ եթէ նոյն հինգ կանդիդատներից իւրաքանչիւրը ջոկ ջոկ քուարկվէր, և օրինակ առաջինը ընտրված չը լինէր, նրա կուակիցները կարող էին ընծայել իրանց ձայները երկրորդին, և այլն։

Մեզ կասեն որ դա Համոզմունքի պակասութեան ապացոյց կը լինէր, բայց մեր կարծիքով այդ այդպէս չէ։

Ասենք ես ունեմ իմ սեփական կանդիդատ,—բայց նա, չը նայելով որ ես նրան սպիտակ քուէ եմ տուել, այնու ամենայնիւ չընտրվեցաւ։ Ինչ և իցէ մի քաղաքագլուխ հարկաւոր է ընտրել,—և որովհետև իմ կանդիդատը չընտրվեցաւ, այդ չէ նշանակում որ էլ արժանաւոր մարդ չը մնաց ամբողջ քաղաքում, այդ չէ նշանակում որ ես, ուրիշներից վրէժխնդիր լինելու համար, ամենքին սև քուէ պէտք է տամ....

Ոչ, որովհետև իմ կանդիդատը չընտրվեցաւ, ես այնու ամենայնիւ կարող եմ ընտրողական քուէ տալ երկրորդին, որ թէև իմ կանդիդատ չէ եղել, որին ես թէև այնքան չեմ հաւանում, որքան իմ կանդիդատին,—բայց նոյնպէս արժանաւոր մարդ եմ գտնում, ուրեմն կարող եմ նրան իմ ձայնը տալ։

Մանաւանդ չը պէտք է մոռանալ որ մեր երկրի պէս երկրում հասարակական պաշտօնների վրա ընտրվողները միմեանցից շատ չեն տարբերվում առանձին, կարգից դուրս յատկութիւններով....

Ուրեմն բոլոր կանդիդատների միաժամանակ քուէարկելը ոչ թէ միայն անյարմար էր, բայց և առողջ դատողութեան դէմ էր։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

16 յունվարի

Հայաբնակ քաղաքներից և գիւղերից շատ սակաւ տեղեկութիւններ են հաղորդվում մեր լրագիրներին, որովհետև ամեն տեղ կամ գրողներ չը կան և կամ զանազան պատճառներ արգելք են լինում նրանց ազատօրէն խօսելու և ճշմարիտը գրելու. մեր ժողովուրդի մեծ մասը իր բազմաթիւ կարիքներով անյայտութեան մէջ է մնում։ Ուստի աւելորդ չեմ համարում այսուհետև հետաքրքրական քաղուածներ անել իմ ստացած մասնաւոր լուրերից և նամակներից։

Թերեքի նահանգի Մ. քաղաքից բարեկամներից մէնը գրում է։ «Թղթախաղը մեր քաղաքում այնպիսի մեծ առաջադիմութիւն է արել, որ չը կարծեմ թէ որ և իցէ մի այլ քաղաք այս կողմանէ կարողանայ մրցել մերի հետ։ Երբ մի տեղ ենք հաւաքվում միշտ խօսում ենք, դատում և բացատրում այս ընթացքի վնասակար հետևանքը. ամենքն էլ ասես թէ հասկանում են, համոզվում ու միմեանց խօսք տալիս այլ ևս չը խաղալ. բայց տեսնում ենք, որ օրըստօրէ աւելի խորն են գնում։ Անցեալները տէր Գ.-ին տանը նրա փօն օրի գիշերը 36 խաղ կարտ են բաց արել, որ 2 ռուբլուց կանէ 72 ռուբլ։ Յետոյ տէր-Թ. իր տօնի օրը 10 դիւժին կարտ առաւ մեր խանութից. երբ ես զարմանք յայտնեցի նա ասաց որ գուցէ բոլորը բանացվի. միւս օրը յետ բերեց միայն 3 դիւժին, ուրեմն նրա տանն էլ մի գիշերումը 7 դիւժին կարտ են բաց արել, որ կանէ 84 ռուբլ։ Այս դեռ քահանաների տներն են. իրանք էլ շատ ուրախ են, որովհետև չահվում են, 80 կոպէկով առնում են 2 ռուբլով ծախում. և այս է, որ նրանց ստիպում է երեկոյթներ (вечеръ) սարքել։ Ժողովուրդին խնդրում են թողթ խաղալ, և թէ մէկը նստէ ու չը խաղայ, նրանից զժգոհ են մնում, որ քահանային չահ տալ չէ ուզում. այսպէսով շատ անգամ չը խաղացողն ևս խաթրու խաղում է, որ տէրտէրին օգուտ տայ։ Իսկ տէրտէրը այս պակասութիւնը տեսնել և խրատել ամենևին չէ ուզում, այնքան է ինքը չահվի, նրանք թէկուզ էգուց ուտելու հաց չունենան և կամ գնան ջուրն ընկնեն։ Այս թուղթ խաղացողներից շատերի մօտ եթէ գնաս և բարեգործական նպատակով օգնութիւն խնդրես, հազիւ թէ կարողանաս մէկ մանէթ փող դուրս բերել, բայց մի գիշերում երկու—երեք հարիւրով տարվելը ոչինչ։ Մախլաս, մեր դրութիւնը շատ ցաւալի է, ամեն կողմից յետ ենք, իսկ թղթախաղով շատ առաջ, որ մեր ամենամեծ պարծանքն է։ Այս պատը բոլորի վրա է տիրապետած. այն մարդիկն անգամ, որոնք կոչված են ուրիշներին օրինակ, առաջնորդ և դաստիարակ լինելու, սրա ջերմ երկրպագուներից և գերիներից են դարձել։ Գոնէ լրագիրները խօսէին այս մասին. գուցէ փոքր ի շատէ օգուտ կը լինէր»։ Թէև մեր քաղաքում ևս թղթախաղը առաջադէմ է բաւական, բայց եկեղեցականները չեն մասնակցում նրան, ոչ զբաղվում են և ոչ ժողովուրդին զբաղեցնում նրանով. գոնէ այս մասին շատ ուրախ ենք, որ մեր քահանաները մի քանի տեղերի օրինակին չեն հետևում, այլ միշտ պատարակում են թղթախաղը և իրանց հօտին յորդորում հեռանալ նրանից։

Ղարաբաղի և Շամախու թեմերից շատ սրտամաշ տեղեկութիւններ ենք լսում եկաւորների բերանից. հարիւրաւոր գիւղերի ողորմելի հայ ժողովուրդը անտէր, անխնամ և բարձի թողի արած է. խորին տգիտութիւնը իր սարսափելի հետևանքներով թագաւորում է ամեն տեղ և ամենքի վրա. դպրոցներ չը կան առ հասարակ, սակաւաթիւ եղածներն էլ մի օրինաւոր բան չեն։ Շամախին թեմական վերատեսուչ չունի, իսկ Ղարաբաղը թէև ունի, բայց նա էլ իր աթոռանիստ Շուշու գործերով զբաղված չէ կարողանում գիւղերի երես տեսնել։ Ժողովուրդը ամեն տեղ ծարաւ է ուսման, զգում է լուսաւորութեան պէտքը և սրան լցուցանելու համար իր մէջ նիւթական ոյժ կը ճարվի, բայց գիտակցութիւն և ձեռնարկելու ընդունակութիւն չունի. առաջնորդներ չը կան, որ բացատրեն, հասկացնեն և համոզեն նրանց թէ ինչ կարող է ինքն անել։ Մի քանի տեղերում պետութեան հոգացողութեամբ դպրոցներ են բացվում, բայց ինքը հայը ծալապատիկ պինդ նստած տեղից չէ շարժվում. ասես թէ պետութիւնը պարտաւոր լինի մեզ համար հոգալու, երբ ինքներս չենք աշխատում մեր գլխի ճարը տեսնել։ Գիւղական իշխանութիւնները ու վաշխառուներն անխնայ հարստահարում են ժողովուրդին և ծծում նրան. կաշառակերութիւն, անիրաւութիւն և ինքնագլխութիւն շատ առաջ են գնացել. իւրաքանչիւր անգրագէտ ռամիկ փողի և խմիչքների զօրութեամբ կարողանում է գիւղական դատաւորի կամ տանուտէրի պաշտօն ձեռք բերել և այնու հետև տանջում խեղճերին։ Մի քանի գիւղեր միասին կազմում են մի գիւղական հասարակութիւն, որ յանձնված է մի տանուտէրի և երեքանձնեայ դատարանի կառավարչութեանը, որոնց պարտքերը և իրաւունքները որոշված են տեղական լեզուներով տպագրած և բաժանած օրէնքներով։ Իւրաքանչիւր դատարանի ժապաւինեալ մատեաններ են յանձնված ատրութենից, ուր պէտք է արձանագրվեն ամեն վճիռներ և որոշմունքներ. բայց դատաւորների հաճոյքը օրէնք է, ինչպէս ձեռք է տալիս այնպէս են դատում. և որ գլխաւորն է իւրաքանչիւր դատաւոր առանց խորհրդակցութեան իր համար առանձին է դատում և անհետք կորցնում արածը. հազուագիւտ դէպքերում միայն խորհրդով վճիռ է կայանում և արձանագրվում մատեաններում, այն էլ Աստուած գիտէ թէ ինչպէս։ Իսկ զրկեալները բողոքելու և արդարութիւն պահանջելու ոչ ընդունակութիւն ունեն, ոչ ժամանակ և ոչ նիւթական ոյժ. որքան զրկողութիւններ և կատարեալ քրէական յանցանքներ մնում են ծածկված և չը հետազօտված, որ իրանց թշուառ զոհերի հետ գերեզման են գնում և յաւիտեան մոռացվում։ Ուղիղ է. հասարակութիւնները իրանք են ընտրում նրանց, բայց ոչ գիտակցաբար և կամաւոր, այլ ստիպանքով, ակամայ և կուրօրէն. ինչ է գիւղական ամբոխը—մի թշուառ մեքենայ, որ մի քանի հոգու ձեռքի խաղալիք է լինում միշտ։ Իսկ այս ամենևին լաւ նշան չէ։ Գիւղացու վիճակը շատ ծանր է, նա մարդավարի ապրելու և իրաւունք պաշտպանելու չափ զարգացում չունենալու հովով քահանաները որ իրանից լաւ չեն և մի քանի վատ կողմերով դեռ գերազանց էլ են. գիւղական իշխանութիւնները, վաշխառուն և քահանան միշտ համախոհ, համաբարոյ և համերաշխ են լինում, որը ինքս անձամբ ստուգած եմ երկար տարիներով. ամեն յետամնացութեան, անկարգութեան և զեղծման պատճառ այս երեքս են. սրանք են, որ ամեն առաջադիմութեան և բարեկարգութեան կայծը հանգցնում են և ոչնչացնում. սրանց վարքի ազդեցութեամբ այս բոպէիս չինականի մաքուր խղճմտանքը թուլացել և հաստատուն բարոյականը սկսել է խախտվել։—Ղարաբաղի մի քանի գիւղերում անցեալ ամառը տիֆ էր ընկել, ողորմելիքը փոխանակ իրանց բակերում հաւաքված դարաւոր աղբակոյտերը հեռացնելու, մաքրելու և առողջապահական միջոցների դիմելու սկսել են սուրբերին դիմել կամ անմեղ ոչխարների արիւնը թափել առատօրէն, որ Աստուծու ցասումից ազատվեն։ Առաջ, ասում են, տաւարի ցաւ է լոյս ընկել. սկսել են հիւանդներին մորթել և միսն ուտել և սատկածներն էլ ընակարաններին մօտիկ դէն են ձգել բաց օդի մէջ առանց թաղելու. իսկ նրանից յետոյ տիֆը մարդկանցն է այցելութիւն արել։ Այս գիւղերը այնպիսի լաւ դիրք, բարեհամ ջրեր, սքանչելի օդ և առատ բուսականութիւն ունեն, որ կարող են երջանիկ ապրել, բայց մաքրակեցութեան նշանակութիւնը չը հասկանալով այնքան զոհեր են տալիս զուր տեղից. կանայք աւելի են հիւանդացել և մեռել քան տղամարդիկ, որովհետև նրանք միշտ անբաժան են իրանց կեղտոտ ընակարաններից, և բակերից, այն ինչ սրանք ժամանակի մեծ մասը դաշտերումն են անցկացնում։ Մի ժամանակ հիանալի եղած աղբիւրները այժմ հոտած և վնասակար ջուր են տալիս, որովհետև նրանց շուրջը կամ շատ մօտիկները աղբանոցներ և հանգստարաններ են դարձած վաղուց. նախնական սովորութեամբ իւրաքանչիւր տան առաջ պէտք է իր աղբահարը լինի, ուր ածվում և հաւաքվում են ամեն աղբ և ապականութիւններ և յաւիտեան մնում այնտեղ. և բարեպաշտ հայ—քրիստոնեան ամեն ինչ Նախախնամութեան

և ճակատագրի վճիռ համարելով դործ է ածում իր ձեռքով ապականած ըմպելիքը և օդը և ճանապարհ ընկնում անտի կեանք։ Գիւղերը բժիշկ չունեն ամենևին և չեն էլ սիրում նրանց, որովհետև նրանց դիմել և օգնութիւն ստանալը անտանելի դժուարութիւնների և չարչարանքների հետ կապված է. կարիքի ժամանակ պառաւներ ու դալլաքները թէ մի բան չինեցին չատ բարի, թէ չէ ինչպէս ճակատներին գրված է այնպէս է լինում, ապրողն ապրում է, մեռնողը մեռնում։ Տիֆի պատճառով նահանգական իշխանութեան տնօրէնութեամբ բժիշկները գնացել են և հրամայել, որ գիւղերը մաքրեն աղբերից և հիւանդների տները ցոյց տան դեղ անելու համար. բայց գիւղացիք հնազիտութիւն բանացնելով հիւանդներին թագցրել են բժիշկներից և աղբանոցները մի մատ հողով ծածկել, որով և նրանք խաբվել են և կարծել թէ իրանց պատուէրները արդէն կատարված են։ Ասենք թէ մի տանից մէկը մեռնում է, նրանից յետոյ ուրիշներն էլ հիւանդանում են և կամ մեռնում. գիւղացին, կարծելով թէ առաջին մեռնողի աչքը իր տան վրա է մնացել և կամենում է բոլորին ևս իր մօտ տանել, գնում է խեղճին գերեզմանից հանում, խանչալով սիրտը ճղում, գլուխը կտրում ոտների տակ թաղում և կրկին հողով ծածկում։ Պատահել է, որ հանգստարանում թաղման կարգը կատարելուց յետոյ երբ կամեցել են ննջեցեալին գերեզման իջեցնել տան մեծերից մինը փեշի տակ թագցրած խանչալը հանել է և մի ակնթարթում նրա սիրտը կոխել բաղմութեան առաջ։ Եւ այսպիսի անխելք բարբարոսութիւնները անում են, որ տիֆը հեռանայ իրանցից և կենդանի մնացածները փրկվեն։ Այս ընդհանուր նկարագրից դուրս գուցէ բացառութիւններ ևս լինեն, բայց նրանք ամեն տեղ և ամեն բանում կը գտնվեն ու միշտ բացառութիւններ են, որ հաշուի ձգել չենք կարող։ Իսկ գիւղացու ցաւերը արդարև չատ չատ են. երբ նա կը բժշկվի, երբ նրա աչքերը կը բացվեն և իր բարին ու չարը կը հասկանայ. ումի պարտքն է սրա մասին մտածել և խնամք տանել, թող չտապէ և իր պարտքը կատարէ, քանի որ ուշ չէ, դեռ ժամանակ և հնարաւորութիւն կայ։

Կասպիացի

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

17 յունվարի

Ամսիս 16-ին տեղիս կլուբի դահլիճում հայ ուսուցչական խումբը տուաց մի ներկայացում յօգուտ տեղիս Սահակ-Անուշեան օրիորդաց ճըրիավարժ ուսումնարանի։ Ներկայացրին «Թուղթ խաղացողի կեանքը» և մի վոդեվիլ «Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք»։ Ներկայացումը սկզբից մինչև վերջը չատ լաւ գնաց և այնքան լաւ, որ երբէք չէր կարելի սպասել, որովհետև խմբի յարգելի մասնակցող անձինք բարեխղճաբար և ի պատիւ իրանց աշխատասիրութեան գեղեցիկ կերպով ուսումնասիրած և անթերի կերպով պատրաստած էին իրանց դերերը բեմը դուրս գալուց առաջ. և այդ է ահա գլխաւոր գործը, գլխաւոր հիմունքը մի որ և է գործ յաջող ներկայացնելու կամ կատարելու։ Այո, ես էլ եմ ասում, որ հայը ընդունակ է, առաջադէմ է, յաջողակ է երբ նա միշտ պատրաստված է դուրս գալիս հասարակութեան մէջ գործ գործելու։ «Մշակի» մէջ չատ անգամ կարդալով այս և այն քաղաքներից նամակներ բեմերի վրա տրված հայերէն անաջող և հասարակութեանը զզվանք միայն պատճառող ներկայացումների մասին, ես կարող եմ ասել, որ Ալէքսանդրապօլում թատրոնական դործը իր ամենակատարեալ կէտին հասած պէտք է համարել, շնորհիւ այստեղի ուսուցչական խմբի, որը իր անձնանուէր գործունէութեամբ և անչահասէր աշխատասիրութեամբ ծառայում է հասարակութեան օգտին. փառք և պատիւ ուրեմն սրան։

Բեմի վրա իրանց դերերը նշանաւոր կերպով լաւ կատարող անձինք, որոնք ճշմարիտ արժանի են ամենայն յարգանք և պատիւ վայելելու, հետևեալներն էին տիկին Ա. Տէր-Սարգսեանց Ամալիայի դերում, օր. Կ. Քեանդարեանց Լուիզայի դերում և օր. Ս. Մանդէնեանց տիկին Բերմանի դերում, որոնք առաջին անգամ բեմի վրա ոտք դրած լինելով, որոնցից առաջին երկուսը որ ամենևին թատրոն ասած բանը չը տեսած, այնու ամենայնիւ անկարելի էր նշմարել թէ նրանք բեմական արհեստին անծանօթ էին։ Ուստի առաջին անգամ բեմ դուրս գալ, այդ դժուար, բայց խիստ յաջող կերպով դերեր կատարելը, յիրաւի յատուկ էր միայն երկար ժամանակ բեմական արհեստին վարժված տաղանտաւոր դերասանուհիներին։ Ուրեմն թող ընդունէ հրապարակապէս իմ և թէ դահլիճում ներկայ գտնվող բոլոր հասարակութեան ուրախալից և խորին շնորհակալութիւնը մանաւանդ երիտասարդ տիկին Ա. Տէր-Սարգսեանց։

Ներկայացման մէջ նշանաւոր էին նաև հետևեալները. պ. պ. Ամիրեանց դը Ժերմանի դերում, Ղուկասեանց Ժորժի դերում, Մատակեանց Վարների դերում, Տէր-Սարգսեանց Դերմոնի դերում և Մանդենեանց Բերմոնի դերում. իսկ մնացածները նոյնպէս արժանի են ամենայն գովութեան։ Առհասարակ ներկայացումը հիանալի կերպով անցկացաւ, մանաւանդ և «Երկուսս էլ քաղցած ենք» վոդեվիլը։ Հասարակութիւնը, նրա հետ խառը և օտար ազգի անձինք չատ գոհ և շնորհակալ մնացին։

Ներկայացման մուտքը մօտ 400 բուբլէ եղել, ծախքը դուրս չէ եկած։ Առաջիկայ շաբաթ կը ներկայացվի Սունդուկեանցի «Պէպօ» կոմեդիան. յաջողութիւն եմ ցանկանում յարգելի խմբին։

Մ. Միհրանեանց

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

4 յունվարի

Անցեալ դեկտեմբերի 26-ին Մոսկվայում վերջապէս կայացաւ ներկայացումը յօգուտ չքաւոր հայ ուսանողների. ներկայացնում էին «Պէպօ» Սունդուկեանցի երեք արարուածով և երկու վոդեվիլ—մէկը հայոց և միւսը ռուսաց։ Ներկայացումը ընդհանրապէս յաջող էր. մանաւանդ «Պէպօն» և հայոց վոդեվիլը. իսկ ռուսաց վոդեվիլը բացի այն անաջող ընտրողութենից, անցաւ բաւականին ծանր և դանդաղ։

Մոսկվայի հայ հասարակութիւնը անցեալ տարի էլ իւրաքանչիւր տարվայ պէս համակրութեամբ ընդունեց ուսանողների հրաւէրը. իսկ նրա առատաձեռնութիւնը երևում է նրանից, որ ներկայացումից դոյացած գումարը, ինչպէս ասում են, հասնում է 900 բուբլու։ Ցոյս կայ, որ բացի ծախսից ուսանողներին զուտ օգուտ մնայ մօտ 600 բուբլի։

Լսում ենք, որ հայ ուսանողներից մի քանիսը աչքի առաջ ունենալով հասարակութեան համակրութիւնը, մտադիր են բարեկենդանին մի ներկայացում ևս տալ բարեգործական նպատակով։ Այս անգամին նրանք ցանկանում են ծանօթացնել հայ հասարակութիւնը եւրոպական հռչակաւոր հեղինակների հետ, ընտրելով նրանց այն գրվածները, որոնք հասկանալի և յարմար կը լինեն հայերի համար։ Շատ գեղեցիկ գիտաւորութիւն, մանաւանդ, որ մինչև այժմ այդ հեղինակների և ոչ մէկի աշխատութիւնը մեր հասարակութիւնը տեսած չէ Մոսկվայի բեմի վրա։ Գործը դժուար է, բայց մենք ցանկանում ենք լիովին յաջողութիւն։

Ահա մի ուրախալի լուր ևս։ Ինչպէս յայտնի է ամենքին, մի ամսից աւելի է, որ Մոսկվայի հայերը պատրաստվում էին ճաշկերոյթ կազմել ի պատիւ գեներալ Լազարեվի, երբ որ սա վերադառնար Պետերբուրգից Մոսկվա։ Անցեալ դեկտեմբերի 24-ին վերջապէս նա եկաւ Մոսկվա. Հայերի պատգամաւորները գնացին նրան այցելութիւն և այնտեղ խնդրեցին նրան մասնակցել այն ճաշկերոյթին, որ հայերը պատրաստելու էին ի պատիւ նորա։ Գեներալը յայտնելով իր խորին շնորհակալութիւնը, խնդրեց նրանցից եթէ հնար է, նուիրել այդ գումարը, որով ճաշկերոյթ պիտի պատրաստվէր, Էրզրումից և նրա շրջակայքից գաղթած խեղճ հայերին, որոնք այժմ չատ թշուառ վիճակի մէջ են։ Եւ թէպէտ հայ պատգամաւորները չատ խնդրեցին նրան ընդունել այդ ճաշկերոյթի հրաւէրը, բայց նա կրկին և կրկին շնորհակալ լինելով ասում էր.... «Դուք լաւ գիտէք, որ ես այնպէս կուշտ եմ, ինչպէս և դուք. տասն օր ես մնալու եմ Մոսկվայում և ուրախութեամբ կընդունեմ ամեն մի հայի հրաւէրը ճաշել նրա հետ միասին նրա տան մէջ. աղ ու հաց սիրտը բաց։ Բայց այս դէպքում պէտք է հոգ տանել հազարաւոր քաղցած և մերկ հայերի համար, որոնք գուցէ օրվայ հացի կարօտ են...» Տարակոյս չը կայ որ գեներալի խելացի խօսքերը համոզեցին հայ պատգամաւորներին և մօտ 1500 ր. փող ժողովվեց յօգուտ յիշեալ գաղթականների։

* * *

ՆԱՄԱԿ ԴԷՐԲԷՆԴԻՑ

5 յունվարի

Դէրբէնդի թէ ընիկ և թէ օտարական հայերը համարեա թէ կազմում են մի ընտանիք և ուրիշ քաղաքների հետ համեմատելով, այստեղ աւելի կարելի է գտնել սէր և միաբանութիւն։ Բայց ինչ անես որ այս երկու գովելի յատկութիւնները ունենալով, մեր դէրբէնդցիք չատ սառն եղած են դէպի հասարակական գործերը։ Դրանց մի-բանութեան և սիրոյ պտուղը մինչև այսօր եղած է մի օրիորդաց դպրոց հիմնելը և ոչ այլ ինչ։ Մինչև այժմ թէև տեղիք էլ չունէինք մեծամեծ բաներ պահանջելու, աչքի առաջ ունենալով սրանց այս մի քանի տարվան մէջ ունեցած նիւթական կորուստը և հասարակական գործերին ուղղութիւն տուող անձանց պակասութիւնը, բայց այսուհետև անհրաժեշտ է մեզ անտարբեր մնալ, քանի որ մենք միջոցներ և հասարակաց շահը հասկացող անձինք ունենք։ Մեզանից ամեն մէկը գիտէ թէ որչափ պակասութիւններ կան մեզանում, և թէ շատ բանից զուրկ ենք, բայց ցաւալին այս է, որ զուրկ լինելով, ոչինչ չենք գործում, չենք հեռատեսում, որ քանի ուշացնենք մեր պարտքերի կատարումը, այնքան ժամանակին համեմատ կը ծանրաբեռնվեն և յետոյ չենք կարող ոչ մէկին ձեռնհաս լինել. ուստի լաւ չէ՞ այժմէն սկսենք գործել, որչափ մեր ոյժը կը զօրէ։

Մեր դպրոցը Աստուծով կը բացվի և յոյս կայ որ հասարակութիւնը ուշ կը դարձնէ նրա ապահովութեան համար։

Դպրոցից յետոյ պիտի հոգանք այն ժամավաճառ լինող պարոնների համար, որոնք ժողովվելու յարմար տեղ չունենալով, նստում են ամբողջ ժամերով, բաց օդի տակ, փողոցների անկիւններում ու սկսում են երկար ու բարակ զրոյց անել իրենց առօրեայ վիճակի մասին։ Մեծ բաղդաւորութիւն կը լիներ, եթէ յաջողվէր մեր մի քանի երիտասարդաց բարի ձգտումը, հասարակաց ընթերցարան հաստատելու համար։ Եթէ դրանք մի փոքրիկ ընկերութիւն կազմեն ու միաբան գործեն, չատ բան կարող են առաջացնել։ Այնուհետև ժողովրդի զբօսատեղին հասարակաց ընթերցարանը կը դառնայ և ամենքը չատ սիրով յանձն կառնեն տարեկան կամ ամսական մի տուրք վճարել այդ տեղ մտնելու համար։ Ընթերցարանը կարելի է մատչելի անել և կանանց, որոնք միշտ տանը ձանձրանալով ճարահատեալ գնում են կլուբը... մի կողմանէ մեղադրելի էլ չէ, քանի որ կեանքի զուարճութիւնները մեր մէջ պակաս են։ Բայց երբ յիշեալ ընկերութիւնը կազմակերպվի, նրանք դրա հնարը ևս կը գտնեն։

Մեր յարգելի վաճառականների դասն էլ չը գիտէ ժամանակից օգուտ քաղել. մուշտարի չեկած ժամանակը տեսնես երեքով, չորսով արևի առաջ նստած խօսում են ով գիտէ ինչ խորը տեղերից. նրանց զրոյցը ամեն մի հինգ րոպէից տասը այլ և այլ նիւթերի վրա է փոփոխվում, դրանց խօսակցութեան պրոգրամայի մէջ են մտնում պատմական և աշխարհագրական, աստուածաբանական և բնագիտական, ներքին և արտաքին, ընտանեկան և տնտեսական և այլն և այլն հարցեր. որոնք լուծվում են կամ պրոբլեմացնելով, որ ասել է համաձայն է և կամ թէ միաձայն բառեր գործ ածելով։ Լրագիր կարդացող չատ քիչերը կան մէջերնին, որ ասում են գները թանգացել են 5 բուբլանոց կաղէթը 10-նոց է դառել, ինչպէս կարելի 10 բուբլ տալ անօգուտ թղթերի համար, չէ որ այդ գումարով կարելի է այնքան ճերմակ թուղթ առնել, որ 10 տարի դուքանի հաշիւներ գրելուց զատ, դեռ երկու ստօպ առանց բանալու կը մնայ սնդուկին մէջ... խեղճերը կարծես թէ իսկի իրենց ապրանքիցը խաբար չեն որ մէկին երկու գին են գրել հիմա, պատճառելով թէ Մոսկով խրիտը թանգացել է։

Եթէ որ խնայում են 10 բուբլին, ես խորհուրդ կը տամ, եթէ ցանկութիւն ունեն օգտվելու, իրենց մէջ 3-ական բուբլի ժողովին ու մի քանի տեսակից բերել տային, փոխ առ փոխ կարդալու, կարծեմ սա լաւ կը լիներ պարապ միջոցները արևի առաջ բոշ կանդնելուց։

Երանի թէ խօսքերս մի արձագանք գտնէին....

Դէրբէնդցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Գանձակ, 22 յունվարի

Խոնարհաբար խնդրում եմ տեղի տալ ձեր պատուական «Մշակի» լրագրի էջերում յետագայ երկու տողին։

Ցանձն առնելով Գանձակ Ս. Յովհաննէս մայր եկեղեցու երեցփոխանութեան պաշտօնը 1878 ամի յունիսի, 21-ին ես, համաձայն Բարձրագոյն հաստատեալ կանոնադրութեան վասն Հայաստանեաց եկեղեցւոյ, իմ հաշիւը պարտաւոր եմ ներկայացնել տեղական հոգևոր կառավարութեանը ժողովրդականաց վերահասողութենէն զկնի։—Որովհետև խոնարհաբար հրաւիրում եմ բոլոր ժողովրդականաց յիշեալ եկեղեցւոյ մինչև առաջիկայ փետրվարի 15-ը նայել եկամտից հաշիւներին Ս. Յովհաննէս մայր եկեղեցւոյ, ըստ կանոնի 1878 ամի յունիսի 21-էն մինչև 1-ն յունվարի 1879 ամի, և եթէ ուղիղ կը գտնեն թող ստորագրեն, իսկ եթէ որ և իցէ թերութիւն կամ անկանոն ծախք կը գտնեն, ամեն մէկը ազատ է իր նկատողութիւնը անել ժապաւինեալ մատենի վրա։—Մատեանը յանձնված է երկսեռ դպրոցի մոմավաճառ պ. Յարութիւն Յակոբեանին, որը ամեն օր առաւօտեան և երեկոյեան ժամերին բաց կունենայ յիշեալ մատեանը վասն զննութեան ցանկացողաց ի գաւթի յիշեալ եկեղեցւոյ։

Երեցփոխան Ս. Յովհաննէս Մայր եկեղեցւոյ Գանձակայ։

Ներսէս Տէր-Ներսէսեանց

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

Սեղանից անկախ պատճառներով «Մշակի» ներկայ № 9 հրատարակում ենք միայն կէս թերթի մեծութեամբ։

—

Այս օրերս եկած ահագին ձիւնը սկսում է նվազել։ Ցեխը փողոցներում կատարելապէս անանցնելի է։

—

Ռուս տեղական լրագիրները հաղորդում են որ Թիֆլիսի բժշկներից մի մասնաժողով է կազմվում բժշկապետ Մինկեվիչի նախագահութեամբ, որի նպատակը պէտք է լինի քննել այն միջոցները, որոնք պէտք է գործ դրվեն, որպէս զի Աստրախանի նահանգում յայտնված ժանտախտը չը մտնի Անդրկովկաս։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 23 յունվարի (4 փետրվարի)։ Պաշտօնապէս հրատարակված է մինիստրների հետևեալ ցուցակը. Վաղդինգտոն արտաքին գործերի մինիստր և խորհուրդի նախագահ, Մարսեր ներքին գործերի մինիստր և ժամանակաւորապէս ժողովրդական լուսաւորութեան և գեղարուեստների, Դրօլէ զինուորական մինիստր, Ժօրադիբերի ծովային, Ֆրեյսինէ հասարակական աշխատանքների մինիստր, Լրպէր առևտրական մինիստր։

ԲԵՐԼԻՆ, 23 յունվարի (4 փետրվարի)։ Պաշտօնապէս հրատարակված է գերմանական դեսպան Ռէյսի և կոմս Անդրաշիի միմեանց մէջ 1878 թուին կապած դաշնագիրը։ Այդ հաստատված և երկու յօդուածներից բաղկացած դաշնագրով, որոնցից մէկը խափանված է, անգործադրելի է յայտնվում Պրագայի խաղաղութեան դաշնագրի հինգերորդ յօդուածի համեմատ կայացած համաձայնութիւնը։ Այդ յօդուածի հիման վրա հիւսիսային Շլեզվիգի ազգաբնակութիւնը կարելի էր վերադարձնել Դանիային, եթէ ազատ քուէարկութեամբ բնակիչները այդպիսի ցանկութիւն յայտնէին։

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Дозволено Цензурою 25 Января 1879 г. Тифлисъ Տպարան Գ. Մարտիրոսեանցի Типографія Мартиросіанца